«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

13 օգոստոսի, 2026 թվականի N 2-26-L

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի մրցութային ընտրության կազմակերպման ընթացակարգի» 4-րդ կետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 43-րդ կետի 3-րդ և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4.-րդ կետի 2-րդ ենթակետերով, ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը **որոշում է**.

1. ԵՊՀ ռեկտորի պաշտոնի համալրման նպատակով հայտարարել բաց մրցութային ընտրություն և հաստատել հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի քարտուղարին՝
   1) հայտարարությունը հրապարակել ԵՊՀ պաշտոնական կայքով և առնվազն մեկ զանգվածային լրատվության միջոցով.
   2) մրցութային ընտրությանը մասնակցելու վերաբերյալ դիմումների ու պահանջվող փաստաթղթերի ընդունման գործընթացը կազմակերպել ընթացակարգով և հայտարարությամբ սահմանված կարգով ու ժամկետներում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Ս. Ռ. Պապիկյան

ք. Երևան